Ֆինանսավորվում է
Եվրոպական միություն կողմից

USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԵՔԱԹՈՆ

Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ հոկտեմբերի 4, 2024

Միացե՛ք մեզ և մասնակցե՛ք ջրային ռեսուրսների վերաբերյալ տվյալների հանրայնացման հեքաթոնին

23-24 հոկտեմբերի, 2024թ.

Հետաքրքրվա՞ծ ես ջրային ռեսուրսների կայուն կառավարման ոլորտով: Ունե՞ս գաղափար, որը կօգնի տվյալների կառավարման, պարզեցման և հանրությանը հասանելի դարձնելու հարցում: Ուրեմն, միացի՛ր «Հայաստանի ջրային ռեսուրսների տվյալների հեքաթոնին»:

Հոկտեմբերի 23-24 կայանալիք այս հեքաթոնը նվիրված է ջրային ռեսուրսների կայուն կառավարմանը: Միջոցառման մասնակիցները հնարավորություն կունենան համատեղել ջանքերը՝ մշակելու թվային լուծումներ, որոնք կաջակցեն որոշում կայացնողներին և կնպաստեն ջրային ռեսուրսների կառավարման գործընթացում շահակիր կողմերի ներգրավմանը:

Հեքաթոնը համատեղ կազմակերպում են Եվրոպական միությունը և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ սերտ համագործակցությամբ:

Ինչո՞ւ է կարևոր ջրային ռեսուրսների կայուն կառավարումը

Հայաստանի ջրային ռեսուրսների ոլորտում առկա են լուրջ մարտահրավերներ՝ պայմանավորված կլիմայի փոփոխությամբ, անարդյունավետ ջրօգտագործմամբ, ջրային ռեսուրսների աղտոտմամբ: Լեռնային երկիր լինելով՝ Հայաստանը մեծապես կախված է գետերից, լճերից, ստորերկրյա ջրերից, որոնք կազմում են երկրի ջրային պաշարները: Սակայն, գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում ջրի նկատմամբ աճող պահանջարկը, ինչպես նաև հնամաշ ենթակառուցվածքները մեծ ճնշում են գործադրում այդ ռեսուրսների վրա: Կլիմայի փոփոխությունն իր հերթին ավելի է սրում իրավիճակը՝ հանգեցնելով տեղումների նվազեցմանը, գոլորշիացման աճին և ձնածածկույթի ու ջրային ռեսուրսների կրճատմանը:

Ինչո՞ւ մասնակցել

Վստահելի և ամբողջական տվյալների հասանելիությունն անչափ կարևոր է ջրային ոլորտում որոշումներ կայացնողների համար: Ոլորտում տեղեկացված որոշումների կայացումը մեծապես հիմնված է ջրային ռեսուրսների քանակի, որակի, օգտագործման և շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ ճշգրիտ տվյալների վրա: Տվյալների հասանելիությունն ու թափանցիկությունը նպաստում են նաև շահակիր կողմերի

ներգրավմանը և խթանում պետական մարմինների, գիտական հաստատությունների, ՀԿ-ների և համայնքների միջև համագործակցությունը՝ նպաստելով ջրային ռեսուրսների անվտանգությանը և ոլորտի դիմադրողականությանն ուղղված ջանքերի մեկտեղմանը:

Մասնակցելով «Հայաստանի ջրային ռեսուրսների տվյալների հեքաթոնին»՝ հնարավորություն կունենաս շոշափելի ներդրում ունենալ երկրի կայուն զարգացման գործընթացում:

Միացի՛ր մեզ և օգնի՛ր ձևավորել Հայաստանի կայուն զարգացման օրակարգը՝ միաժամանակ ձեռք բերելով արժեքավոր փորձ և նորարար գաղափարներիդ համար ֆինանսավորում ստանալու հնարավորություն:

Ո՞վ կարող է մասնակցել

- Հայ ուսանողներն իրենց կրթական ծրագրերի շրջանակներում (SS, ջրային ռեսուրսներ, շրջակա միջավայր և աշխարհագրական տեղեկատվական համակարգեր (ԱՏՀ/GIS) մասնագիտացումներով)
- Հայ երիտասարդ մասնագետները պետական կամ մասնավոր կազմակերպություններից (օրինակ՝ ստարտափներ, ՓՄՁ, տեխնոլոգիական հարթակներ, ՀԿ-ներ, համալսարաններ և գիտահետազոտական ինստիտուտներ, արդյունաբերություն)
- Ցանկացողները կարող են դիմել անհատապես կամ թիմով: Թիմերը պետք է բաղկացած լինեն 3-5 անդամից:
- Անհատապես դիմելու դեպքում՝ կազմակերպիչները մասնակիցներին կխմբավորեն թիմերի:
- Թիմի ամենաօպտիմալ կազմը՝ առնվազն մեկական ջրային ռեսուրսների կամ շրջակա միջավայրի, SS և ԱՏՀ մասնագիտացում ունեցող անդամ
- Դիմորդները պետք է լինեն 18-35 տարեկան
- Խրախուսվում է աղջիկների և կանանց մասնակցությունը

Մասնակիցները հնարավորություն կունենան

- ստանալ **արժեքավոր հմտություններ և գիտելիքներ** ջրային ռեսուրսների տվյալների կառավարման ոլորտում
- **համագործակցել Հայաստանի ջրային ոլորտի լավագույն փորձագետների** հետ
- ստեղծել **արդյունավետ կապեր ոլորտի փորձագետների**, մենթորների, մասնագետների, երիտասարդների հետ
- ընտրված լավագույն երեք գաղափարները հեղինակած թիմերը, սահմանված չափանիշներին համապատասխանելու դեպքում, **կստանան ֆինանսավորում մինչև 2,500 եվրոյի չափով՝** իրենց գաղափարները մշակելու և նորարար թվային լուծումների ու ծառայությունների վերածելու համար:

Ինչպե՞ս դիմել

- Ներբեռնե՛ք հայտադիմումը https://www.eu4waterdata.eu/en/news-and-events/hackathon-am կայքից:

- Ուղարկե՛ք լրացված հայտադիմումը և ինքնակենսագրականը hackathon@eu4waterdata.eu էլ. հասցեին
- Դիմելու վերջնաժամկետը՝ ս.թ. հոկտեմբերի 4, 2024, (23:59, CET)
- Սեպտեմբերի 25-ին ժամը 16:00 բոլոր հետաքրքրվածների համար կկազմակերպվի առցանց կողմնորոշիչ հանդիպում՝ քննարկելու կազմակերպչական մանրամասները, և պատասխանելու հարցերին: Հանդիպման հղումը՝ https://us06web.zoom.us/j/88621168562?pwd=GK3MrNLkXS3wMSHMrw5Wilxbq8ylTP.1
- Ընտրված դիմորդները կտեղեկացվեն ս.թ. հոկտեմբերի 7-ի շաբաթվա ընթացքում
- Մինչև միջոցառումը ընտրված մասնակիցների համար կկազմակերպվի առցանց դասընթաց՝ քննարկելու կազմակերպչական մանրամասները, տրամադրվող նյութերը և պատասխանելու մասնակիցների հարցերին:

Հայտադիմումների հետ խնդիր ունենալու դեպքում, խնդրում ենք կապ հաստատել կազմակերպիչների հետ hackathon@eu4waterdata.eu էլ. հասցեով:

Կազմակերպչական հարցեր

- Մասնակիցների տեղափոխումը Երևանից մինչև միջոցառման անցկացման վայր և գիշերակացը կհոգան կազմակերպիչները
- Միջոցառման ընթացքում կմատուցվի սնունդ
- Աշխատանքներն օպտիմալ կազմակերպելու համար մասնակիցները պետք է ներկայանան սեփական համակարգիչներով
- Հեքաթոնը շուրջօրյա է, թիմային աշխատանքները կշարունակվեն նաև երեկոյան ժամերին

Կապ

- Միջոցառման մասին տեղեկատվությունը հասանելի է https://www.eu4waterdata.eu/en/news-and-events/hackathon-am կայքում
- Հարցերը կարող եք ուղարկել hackathon@eu4waterdata.eu էլ. հասցեին մինչև ս.թ. սեպտեմբերի 26-ը

Բաց մի՛ թող այս հնարավորությունը՝ դառնալու դրական փոփոխությունների մի մասը. դիմի՛ր այսօր: